

ԿԱՆՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՅՑ ՄԷՋ

Գ.

ՎԱՐԴԱՊԵՏՈՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՑԱԹՆԻՈՒ ԴՊՐՈՑԻՆ

5. — Դաւազանի տըւչութեան արարողութիւնը, ինչպէս տեսանք, լծորդուած Գիշերային ժամերգութեան, կը կատարուի Եկեղեցւոյ մէջ, Տաթևու վարդապետարանին մէջ, սակայն՝ կ'ըսուի, ըստ աւանդութեան, թէ Եկեղեցիէն դուրս՝ վանքի գաւաթին մէջ բարձրացող կոթողի կամ սեան մը տակ կը կատարուէր այս հանդիստեղծ արարողութիւնը: — Ձեռք գիտիք թէ ս'ըւչափ ստոյգ է այս աւանդութիւնը. քայքայ ստոյգ է՝ որ այդ նպատակի համար չլինուեցաւ յիշեալ սիւնը: Օրբէլեան կը պատմէ թէ Տաթևու վանքին մէջ չլինողը, Յովհաննէս Եպս., երբ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շինութիւնը աւարտեց տաճնեկու տարիներու ընթացքին մէջ, Եկեղեցւոյ տարաւային դրան գիմաց շինել տուաւ ՎՍԽԱՆ մը զարմանալի յանուն ՍՐԲՈՅ ԵՐԻՐՈՐԴՈՒԹԵԱՆԻ ի մանք քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ (Օրբէլեան, Հատոր Ա., երես 270): Այս զարմանալի կամ զարմանալի, այսինքն շարժուն սիւնը շինուեցաւ 905-907 թ. միջոցին, և այնքան լաւ շինուած է՝ որ հրդեհի և ուրիշ աղէտներու միջոցին չաւաղուեցաւ (Անդ, Հատոր Բ., երես 57): Շատ հաւանական է որ Յովհ. Եպիսկոպոս իր շինարար աշխատանքներուն իւր յիշատակ կամ իւր յաշարար կանգնեց այդ սիւնը՝ նուիրելով զայն ԱՌԵՆԱՍՏՈՐԵ ԵՐԵՐՈՂՈՐԵՑԱՆ:

Պատմական որեւէ յիշատակութիւն չկայ ի նպատակ աւանդութեան, և նոյնիսկ Կ. Վ. Շահնազարեան, որ այս շարժուն սեան մասին կ'ըսէ, որ շարժի եթէ ոք յիշու ի նա, զորոյ զգործն մեզ ևս բազում անգամ դէպ եղ ևս առնու (Անդ, Հատոր Ա., երես 335) — բան մը չըսեք արիւղ աւանդութեան նկատմամբ: Իմ գիտցածներէն ա-

ռաջին անգամ Վահան Վրդ. Բատումեանցն է, որ կը յիշէ Տաթևու գաւազանին աւանդութիւնը՝ տալով նաև ասոր նկարն ու նկարագրութիւնը. «Այդ արձանը մի քաւական հաստ ութանկիւնի քարի սիւն է, 30 կանգուն (14 արշին) բարձրութեամբ, որ թէպէտ տնկած է պատուանդանի վրայ, քայքայ շարժուն է: սիւնը ունի իր զլիկ վրայ քարի խաչ, քարի շրջանակով: Սորան բուրդովին նման մի արձան, քայքայ աւելի փոքր զիրքով, կայ և Որոտնու վանքում (Վա. Պատին և Որոտնու գիւղի մօտ, 2 ժամ հեռու Տաթևից): Աւանդութիւն կայ՝ որ ամբողջ Տաթևու վիճակի կամ մետրապոլիտութեան վարդապետացունիւրը այդ սիւնի տակ էին ստանում վարդապետական իշխանութիւնը և գաւազանը (ծայրագունույթիւն): Իսկ Որոտնու վանքի սիւնի տակ մասնաւոր իշխանութիւնը: Ուրեմն շատ հաւանական է որ այդ պատճառով սիւնը ստացած է ԿՈՒՄԱՋԱՆ անունը» (ՏԻՆ Մ. Գօշի Ինտրոդուկցիա, Մասն Ա., երես 92, ծնթ. 162):

Տաթևու գաւազանի մասին նոյն տեղեկութիւնները կը կրկնէ նաև Գր. Ա. Բնդ, Մանգակունի և կու տայ տարբեր նկար մը, որ հաւանաբար աւելի ճիշդ գծուած է քան Բատումեանցինը: Մանգակունին կ'ըսէ, «Հետաքրքրութեան յազուրդ տալու համար անձամբ գնացի Տաթև. երբ վանահայրը ծառային ասաց, սիւնը հրէ որ շարժի, հրեւուն պէտ՝ սիւնն սկսաւ շարժիլ. շատերի հետ ևս էլ սկսայ փախչիլ, վախնալով՝ մի գուցէ հաւատարակչութիւնը մէկ կողմի վերայ թեքուելով վերաններս ընկնի, սակայն սիւնը մի փոքր շարժուեց յետոյ՝ կանգ առաւ. յետոյ մի քանիցս անգամ էլ շարժուով ընտելացանք» (ՏԻՆ ՌԱՅԻՐԵԼԻՄ, Գ. տպ., 1904, Թիֆլիս, երես 294-95, Հմմտ. նաև Սորեմեդալ, Թ. 2048):

6. — Մայրագոյն Վարդապետի արուած հողեր իշխանութեան գործադրութիւնը եկեղեցւոյ մէջ՝ կանոնադիտութիւն կապուած է արտաքին նշաններու հետ, որոնց առաջինն է գաւազանը: Առանց գաւազանի բնի պէտք չէ իլլէ Վարդապետը քարագիւղ և ասուցանելու համար: Դաւազանէն ետքը կու գայ իրոքը, վարդապետական աթոռը, զոր պէտք չէ շփոթել Եպիսկոպոսական կամ

իշխանական աթոռին հետևող Սևուցական կամ վարդապետական աթոռը հին է, իշխանականին և պատուականին պէս վարդապետը իբր ուսուցիչ՝ ի պաշտօնէ իրաւունք ունի նստելու աթոռի վրայ և այն պէս սուսցանել կամ քարոզել։ Աթոռի մասին Մաշտոցի Կանոնին մէջ որևէ խօսք չկայ, բայցի սա որոշ յայտարարութիւնն — «նստել ի վերայ աթոռոյ և առնել դրօժաւորութիւնս», որ կայ Կանոնին վերջը, Մ. Վրդ. ի պաշտօնը սահմանող գրուածքն մէջ։ Եւ ստուգելու Մ. վարդապետներ երկար ժամանակ պահած են եկեղեցւոյ մէջ, մանաւանդ քարոզի առին, աթոռի նստելու իրաւունքը։ — Ե՞րբ և ինչո՞ւ համար դադարած է այս սովորութիւնը, դժուար է ճշգրտել։ Երբեք թուում ենք որ հիմա Մայր վարդապետներու աթոռի իրաւունքը խափանուած է, և եթէ անոնք գաւառներու մէջ աթոռ կը գործածեն, ոչ անոր համար որ Մ. վարդապետ են, այլ որովհետև իբր ինքնազոր կամ Տեղապահ, վիճակաւոր եպիսկոպոսի իրաւունք կը վայելեն և վիճակի աթոռին վրայ կը նստին։ Թէև գաւառներու մէջ, անգ թեկ, մանաւանդ հիւր վարդապետներու օր պատիւն աթոռ կու տան եկեղեցւոյ մէջ թէ՛ նստելու համար գաւառի մէջ և թէ՛ բնակի վրայ՝ քարոզի առին։ Իսկ իրաց արդի վիճակին մէջ կարելի է պատշաճապէս խափանուած նկատել վարդապետական աթոռի գործածութիւնը քանի որ կաթողիկոսական վանքերու և սահմաններու, ինչպէս նաև Պատրիարքական եկեղեցիներու մօտ, երբեք աթոռ չեն նստիր Մ. վարդապետներ քարոզի առին։

Իսկ նկատել առնելով Մայր-Մաշտոցի սպագորութեան թուականը, 1807, ուր բաւորովին յայտնի կերպով կը յարգուի վարդապետական աթոռի իրաւունքը և գաւառներու մէջ չի պատիւն աթոռ դնելու սովորութիւնը, կրնանք ըսել թէ Մ. վարդապետութեան իրաւունքին այս խափանումը ոչ միայն շատ հին ժամանակի մը չի վերադառնար, այլ նաև, ըստ մեզ, պարզապէս բնարարութեան մըն է այդ — անշուշտ եպիսկոպոսական տեսակետով։ Իսկից գտա՝ կաթոս պատճառ մըն ալ վարդապետութեան և վարդապետ տաղասին սովորութիւնը, որ տրուած է և գծախառնար դեռ կը տրուի,

ստանց բացատրութեան, քորք վերաբարենբուն։ Այս մտքով Քննադատ շատ հնչող կը դիտէ։ «Իսկ Մայրապոսին վարդապետութեան ի նկատման ունեցած աթոռի իրաւունքն այժմ ընդհանուր ու հաստատուն կերպով դադարած ու խափանուած է, ի հարկէ Մայրապոսին վարդապետութեան օրէնքում ու նստելու սովորութիւնը կորսնցուցած ըլլալուն համար» (Տե՛ս Ընթերցել Օրէնքոյ, 1906, երես 83, Արքա բողոք, Հմմտ. նաև Լոյս, 1905, երես 918)։

վարդապետին աթոռը սակայն Մայր վարդապետին անընդարարի իրաւունքն է քանի որ նոյնինքն գաւազանի տրուածն են ևս կապուած է ան։ Թէ՛ Մանաւոր և թէ՛ Մայր վարդապետութեան գաւազանի տրուածութիւնը, ինչպէս պիտի տեսնենք, պէտք է առ միայն Մեծ — վարդապետը, այսինքն այն՝ որ ունի այդ երկու վարդապետութիւններին ալ և կու տայ Աթոռի վրայ բազմելով։ Այս աթոռը վարդապետական աթոռն է։ Այս Տրուածութեան իրաւունքը հիմա եպիսկոպոսին անցած է, այսինքն այն եպիսկոպոսին՝ որ ունի Մանաւոր և Մ. վարդապետութեան լիակալ իշխանութիւնները։ Այս սկզբունքով, այն եպիսկոպոսները՝ որոնք չունին Մ. վարդապետութեան իրաւունք չունին նաև վարդապետութեան աթոռի վրայ նստելու և քարոզելու։ Վասնզի վարդապետութիւնը սուսցանելու և քարոզելու կարողութեան և գրատութեան հետ կապուած է և ոչ թէ վիճակի մը հագնոր կոտոմարութեան և եկեղեցւոյ վարչական գործերուն հետ։ Դր. Տաթևացին երկար և հետաքրքրական բացատրութիւններու մտած է՝ որովհետեւ ցոյց տալու համար վարդապետին և եպիսկոպոսին դերերը եկեղեցւոյ մէջ, ինչպէս որ պիտի տեսնենք։

Բազմալի է որ վարդապետութեան իրաւունքները վերահաստատուին, քանի որ կա՛յ վարդապետութիւնը։ Գաւազանի և Աթոռը պաշտօնի հետ կապուած են, պաշտօնի գործադրութեան խորհրդաւոր և արտաքին նշաններն են, վարդապետութեան իրաւունքն են և ոչ թէ պաշտօնիային կամ վարդապետին անհատիկ։

Եկեղեցւոյ պատմութեան վերջին շրջաններու կը տեսնենք նաև որ քարոզի առին

վարդապետի ոտքին տակ գորգ (խալիչէ) փռելն ալ այդ իրաւունքներէն կը համարուէր: Գաւառացի Ստեփան վարդ. կը գրէ թէ երբ Մովսէս վարդ. շատ նեղուեցաւ Մեղքիտեց կնիք ի նահապետականէն, օգրիւ վիճակն և զլուսավորման և զխալիչէն առաքեաց առ Մեղքեանի Կաթողիկոսն՝ ասելով. որովհետեւ ոչ կամիս զքարոզութիւն մեր, ահա, ապրիլ առ քեզ գիշտանուելիւն մեր, և մեք լռեալ դադարեմք ի քարոզելոյս ի Ա. Դաւ. ըրեցի, Տպ. 1866) Ամսթերամ, երես 287):

Ինչպէս կ'երեւի, ասոնք սնափառ շուշուկանքներու զօհապետ մտաւ ոչ ոչնչութիւններ չեն. այլ ուղղակի պաշտօնի հետ կապուած իրաւունքներ, որոնք սկզբունքով կանոնագրաւորուած արժէք մը ունին:

Եւ այս բոլորը, վերադրին ըսիւք արդէն, յարդոնք մըն է Սոսքոյն և Աստուծոյ խօսքին: Արժանաւոր պաշտօնականներու բերնով պատմուած այդ խօսքերը եկեղեցւոյ ամենէն բարձր և տիրող մէկ զիրքէն յատուկ գոյն և ձև մը առած են, վայելուչ և պատկառելի, և միշտ վեհ բան մը ունին ունեցիկներու համար այդ զիրքը պէտք է պահել իր ասանդական և բնիկ ինքնութեան մէջ:

Այսօր բնական ըմբռնումները բարեփոխուած են սակայն, և Հայ Եկեղեցւոյ մէջ ալ նոյնիսկ Ծ. Վարդապետութիւն ունեցող եպիսկոպոսներ, երբ կը քարոզեն՝ չեն նստիւր Աթոռի վրայ, թէն աթոռ կը զրուի: Շատ ցանցառ են աթոռի վրայ բազմելով խօսողներ: Իրաւ ալ, կանգնած խօսել շատ տեղի յարմար է քան նստուկ խօսելը. որովհետեւ այդ ուղիւ կեցուածքի մէջ է որ բնութագրը կրնայ տիրել իր խօսուածքին ու շարժուածքին: Նոյնիսկ այս իրողութեան հանդէպ բազմաթիւ է որ Վարդապետութեան իրաւունքները վերափոխուան:

Ն.

ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՏՐՈՒԱԾ ԻՐԱՎԱՆՔՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վարդապետը ինչպէս պիտի գործադրէ իրեն տրուած կանոնագրաւոր իրաւունքները Հայ Եկեղեցւոյ նախագահական կար-

գին մէջ, Վարդապետին տրուած այդպիսի անսահման և անկաշկանդ քարոզութեան գործադրութիւնը չի՞ կրնար պայտի եպիսկոպոսական իրաւունքներու և սեղի տալ այնպիսի անպատեհութիւններու, որոնք գծաւորացնեն երկուքին ալ գործունէութիւնը: — Անխառնափոխի է այդպիսի հեռանկար մը, այն շատ մը պատճառներով, որոնց վրայ պիտի չծանրանալք այստեղ: Եւ արդէն կը կարծենք որ այնպիսի պատճառներու համար արեւած է վարդապետութեան բուն նկարագրիւր և վարդապետը գաղափար է ըլլալէ այն անձնաւորութիւնը, որ պաշտօնի կոչուեցաւ 14 աստիճաններով:

Եթէ իրաց արդի վիճակին մէջ անհատ կենսալի տարբերութիւն մը կայ 14 աստիճաններու իրաւունքներով ժողովուած վարդապետութեան, որ կը գործադրէ իր իրաւունքները, և արդի վարդապետութեան մէջ, որ զրկուած է իրեն տրուած իրաւունքներէր գործադրելու իշխանութիւնէն, — որովհետեւ 14 աստիճաններու տրուութիւնը անուանական բան մըն է հիմա —, բայց իրողութիւնները բոլորովին տարբեր են վարդապետութեան պատմութեան մէջ:

Կր. Տաթևացին, իրեն տրուած կանոնագրաւոր իրաւունքները գործադրող Մեծ-Վարդապետներէն մէկը, երկու զլուսնուիրած է Ձմեռան Հասարակ մէջ (Լի. և ԼԲ. զուտներ) Վարդապետին տրուած իրաւունքներու գործադրութեան մասին, բացատրելով թէ ինչ է վարդապետին և եպիսկոպոսին դիրքերը նախագահութեան մէջ և թէ ինչպէս կը զանազանուի իրաւաքանչիւրին գործը:

Տաթևացին խօսելով Վարդապետներու և Հայրապետներու աստիճաններուն վրայ՝ կ'ընէ. «Այլ սոքա կրկին աստիճանքս ասացեալ՝ ոչ թէ նոր ինչ եկամուս եղեալ է ի վերջնոց, այլ անգամայն ի սկզբունք յարիւն և յարարածս տեսանին»: Այս մասին Տաթևացւոյն տուած մեկնութիւններն ու բացատրութիւնները չափազանց խորհրդապաշտական են. ինչպէս որ արեւն ճիշդին լուսափայլութիւնք կը ճառագայթեն և կը լուսաւորեն զմեզ, այսպէս ալ: Սուր Դիմանքիս ըսածին պէս, Հայր Աստուծոյ կրկին լոյսեր կը ճառագայթեն, այսինքն Բանի Աստուծոյ և Հոգին Սուրբ:

և կը լուսաւորեն բոլոր էակները. այսպէս ալ Տէրն մեր Յիսուս Քրիստոսն է, որ եկեղեցւոյ հիմն ու սկիզբն է. կը ծագին վարդապետութեան խոսքը և որոտթեան շնորհքը որով կը լուսաւորուի սրբոյր լուսնի հաւատացեալաց խորհուրդը: Դարձեալ ինչպէս որ Աստուծոյ Ռանէն գիտութիւն իմաստութեան կը հեղու քերականներուն, և շնորհէն ալ որոտթեան շնորհքը կը բոլոր սերտքներուն, և անոնցով կը որբէ, եւ լուսաւորէ և կը կատարելագործէ իմանալիներուն բոլոր գասերը, այսպէս ալ Սուրբ Եկեղեցին կը մաքրուի, կը լուսաւորուի և կը կատարելագործուի սրանի վարդապետութեան և քահանայական սրբութեամբ: Եւ ինչպէս որ Քերականներ Աստուծոյ Բանին գիտութիւնը կ'ստեն և կը սորվենքն միջիններուն, ապա ալ՝ վերջիններուն, անոնք օրինակ են մեր վարդապետներուն, որոնք աշակերտներու կը սորվենքն, աշակերտներն ալ՝ մոզս վարդին: Տաթևացին՝ Ազատագր, լեզուներու խոսակցութեան, Միջփոխակեր, Սրբաճառ, Մոգսէսի և Ահարոնի, Հեղի քահանայապետի և իր որդւոց Սամուէլի և Նաթանի, Սաղոմոնայ և Եղիի և այլոց վրայ կը տեսնէ քահանայութիւնն ու վարդապետութիւնը և մինչև Քրիստոսի առնել կը քաշէ ու կը բերէ իր նախնութիւններն ու հանգիստութիւնները, և հոն ծնորդու, գաւառորդներու և 72 թարգմանիչներու վրայ կը տեսնէ վարդապետութիւնը, իսկ Յովնանէս Մկրտչի՝ Վոյ Չաքարի վրայ կը գտնէ քահանայութիւնը. վերջապէս, կ'ըսէ թէ այս երկու աստիճանները միանալով գտնան Երեման Երեման Քրիստոսի վրայ, որ լուսաւորուի. Երբ կոչէք զիս վարդապետ և Տէր, և ու. եմ իսկաւ իր վարդապետութիւնը ցոյց տուաւ միշտ քարոզելով ժողովուրդին իսկ քահանայութիւնը ցոյց տուաւ երբ լուսաւոր աշակերտներուն ոտքերը և իր մարմինն ու արիւնը բաշխեց վերնատան մէջ: Ասկից զատ իր առաքելներն ալ վարդապետ ըրաւ՝ երբ զրկեց գանձք քաւրոյիւ. աշակերտեցէք զամենայն հեթանոսս և ուսուցէք նոցա զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ. և քահանայ ըրաւ ըստ իմ անուան. զմեզ գնասաւ յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ: Առաքելներն

ալ երբ կը քարոզէին, ասի վարդապետութիւն էր, և երբ կը ձեռնադրէին՝ այս ալ քահանայութիւն էր (Այն բոլոր հայրապետները (= եպիսկոպոսներ), որոնք Եկեղեցւոյ համար Կանոն կը դնէին և ժողովքով կը հալածէին հերետիկոսները, ասին աստիճան վարդապետութեան էր, ինչպէս Սուրբ Ռաբիգ, Աստուածաբան, Աթանաս, Կիրիլ, իսկ անոնք որոնք չորս աստիճան հաստատեցին(*) օր զէմս չորեքեկապետութեան, և կարգեցին ժողովուրդը սկիզբէն ինչ աստիճան ըստ ինչ գասեց երկնաւորաց, այն քահանայապետութիւն էր:

Ինչպէս կը տեսնուի այս քաղաքականութիւնը Տաթևացոյն քաղաքութիւնները մեզ համար համարել չեն, բայց կատարելագէտ հետաքրքրական են ասոնք. սրբական խորունկ հիմք կը փնտէն ան վարդապետութեան և քահանայութեան համար, որպէս զի կ'որով ըլլայ նորարարութեան մէջ որոշիչ զորքը վարդապետին, որ Եկեղեցւոյ մէջ միակ աւերն ու իշխանն է նոյնքին, տեսականին, և զիրքը Եպիսկոպոսին. որ միակ ներկայացուցիչն է քահանայութեան և զործագիր իշխանը Եկեղեցւոյ բոլոր պաշտամունքին:

Տաթևացին պատմական գիտնի մը վրայ կը կոխէ՝ երբ այդ մեղմութիւններէն ետքը կ'ուզէ մասնաճիւղ ընել Հայ Եկեղեցւոյ քահանայութեան և վարդապետութեան ծագումը: Փայով մեզի՝ մեր քահանայապետութիւնը արաքափայլեաց Ս. Գրիգոր Լուսաւորչէն և անոր շատակը Ս. Սահակէն օգնուաւ կարգի ալքն ի նախնէ ձեռնադրեալ: Իսկ վարդապետութեան աստիճանը՝ Ս. Մեսրոպէն, օր արար զիր պոյս մերոյ և վրայ և Ազուանից և թարգմանեաց զՍուրբ Գրիգոր ի լեզուս մերոյ:

Արսալուսմ Լայա Զարաթերթե, 1906
(Շարունակիկ) 13)

(*) Կ'ազնաւորէ եկեղեցական առաջին չորս աստիճանները, Անտիօքի, Հոմոսի, Աղեքսանդրիոյ և Կ. Պոլսոյ: